

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ  
ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Արցախի բազմաշերտ ու հարուստ ժողովրդական բանահյուսությունը մինչ օրս հիմնավորապես ուսումնասիրված չէ: Հրապարակի վրա և արխիվներում կան բազմաթիվ տպագիր և ձեռագիր բանահյուսական ժողովածուներ, որոնց մեջ ամփոփված են գրեթե երկու հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ նվիրյալ բանահավաքների ձեռքով գրառված Արցախի բանավոր մշակույթի գանձերը:

Ավանդական բանահյուսության մի շարք ժանրեր (իրապատում և հրաշապատում հեքիաթ, ավանդություն, զրույց, հուշապատում, զվարճախոսություն, վիպական երգեր) իրենց խորքում պահպանում են ժողովրդի պատմության հեռավոր արձագանքները: Ազգի պատմության վրա խոր կնիք թողած պատմական իրադարձությունները և այն կերտող առանձին նշանավոր պատմական դեմքերը դառնում են վիպական պատումի առանցք և արդյունքում ժողովրդի հավաքական հանճարը ստեղծում է պատմավիպական մի ողջ պատումնաշար, որը, դարերի ընթացքում բերնե-բերան անցնելով, հղկվելով, հասնում է ներկա ժամանակները: Հանրահայտ պատմական դեմքերը իրենց հռչակով, կատարած լավ ու վատ գործերով, նվաճումներով, բռնություններով, մեծագործություններով բանահյուսական հերոս դառնալու հնարավորություն են ձեռք բերում: Նմանօրինակ պատմավիպական կերպարների թվին են պատկանում Ալեքսանդր Մակեդոնացին, Լենկ Թեմուրը, Շահ Աբասը, Նադիր շահը, Դավիթ Բեկը և ուրիշներ: Երբեմն պատմական դեմքերը, որոնք դարերի խորքից են գալիս, այնքան են կերպարանափոխվում, որ ընկալվում են որպես բանահյուսական կերպարներ, ինչպես օրինակ՝ Դանանդա Բահլուլը, Լոխմանը, Խիկար Իմաստունը, Մուլլա Նասրեդդինը և ուրիշներ: Սակայն ոչ միշտ է, որ պատմական

կարևոր իրադարձությունը և ժողովուրդը կարող են դառնալ բանահյուսության թեմա: Երբեմն տեղական նշանակության իրադարձությունը և ժողովրդի ծոցից դուրս եկած ծանոթ անհատը ավելի կարևոր նշանակություն են ստանում ականատեսների ու հասարակության համար և դառնալով վիպական պատումների նյութ՝ զնալով տարածվում ու ահագնանում են և ընդհանուր վիպական բնավորություն ձեռք բերելով՝ հավասարվում համաշխարհային պատմավիպական ավանդույթի: Ձեռքի տակ ունենալով Արցախի բանահյուսական ժառանգությունը և այն դիտարկելով Արցախի հարուստ պատմության ֆոնի վրա՝ տեսնում ենք, որ ժողովրդական բանավոր ավանդույթի բազմազանությունն ու հարստությունը պայմանավորված են Արցախի պատմությամբ, բնաշխարհով, արցախցիների հերոսական բնավորությամբ, քաջությամբ, միամտությամբ, որը երբեմն կարող է հասնել հիմարության (հաթերքցիներ), ինչպես նաև ժողովրդի միստ ու կացով, սովորույթներով, կենցաղով: Արցախի պատմության որոշակի փուլերում բանավոր ստեղծագործություններն ակտիվորեն կենցաղավարել են, անցել են բերնե-բերան, համալրվել են նոր անուններով ու դեմքերով և, ինչպես վկայում է վիպասան Բաֆֆին. «...ժողովուրդն ունի իր լեզունդները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանք կատարած չէին կարող լինել: Օրինակ, ինձ շատ անագան պատահում էր նկատել, որ միևնույն պատմական իրողությունը ամեն մի գավառի ավանդությունների մեջ ընծայում էին նույն գավառի մի հայտնի հերոսի, քանի որ այդ անձնավորությունը չէր կարող այս գործը կատարած լինել, որովհետև կամ այն ժամանակ նա դեռ ծնված չէր, կամ վաղուց մեռած էր: Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»<sup>1</sup>:

Վերոհիշյալ մեջբերումը ապացուցում է, որ անցյալում Արցախի բանահյուսությունը հարուստ է եղել տարբերակներով և տեղական նշանակության հերոսներով, այսինքն յուրաքանչյուր գյուղ ունեցել է իրեն ծանոթ ու հոգեհարազատ հերոսը, սակայն բանահյուսական ստեղծագործությունների մի զգալի մասը ժամանակի ընթացքում ոչնչացել կամ

---

<sup>1</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, 9 հ., «Խամսայի մեղիքությունները», էջ 611, Ե., «Սովետական գրող», 1987:

մոռացվել է՝ պայմանավորված այսպես կոչված «հասարակական պահանջարկով»: Փոխվել են ժամանակները, փոխվել են իրադարձությունները, փոփոխվել է հասարակության վերաբերմունքը բանահյուսության նկատմամբ, արդյունքում անվերադարձ կորսվել են բազում բանահյուսական սյուժեներ:

19-րդ դարի 60-ական թվականներին ժողովրդական բանահյուսության նկատմամբ ռոմանտիկ հետաքրքրության ալիքը հասավ նաև Արցախ աշխարհը: Արցախյան բանահյուսության ամենահին բնագիրը Առաքել Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանների ձեռագիր ժողովածուն է: 1860 թվականին Բահաթրյանները գրի առան Շուշի և նրա շրջակա գյուղերի հեքիաթարվեստի նմուշները, որոնցից Առաքել Բահաթրյանի գրառած հեքիաթներն առաջին անգամ լույս տեսան 1894, 1902 և 1903 թվականներին Տիգրան Նավասարդյանի «Յայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի պրակներում<sup>1</sup>: Այդ հավաքչական ու հրատարակչական աշխատանքը շարունակվել է մինչև մեր օրերը՝ հայ մտավորականների, բանահավաքների ու բանագետների եռանդուն ջանքերի շնորհիվ:

19-րդ դարի կեսերից մինչև դարավերջը այդ գործում իրենց լուծանքները բերեցին Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, Կոստ. Մելիք-Շահնազարյանը, Միք. Տեր-Յովհաննիսյանը, Խ. վրդ. Դադյանը: 20-րդ դարը, ներառյալ նախախորհրդային շրջանը, ներկայացրել են Ե. Լալայանը, Ս. Իսրայելյանը, Մ. Առաքելյանը, Մ. Գրիգորյան-Սպանդարյանը, Ա. և Բ. Ղազիյանները, Ս. Վարդանյանը, Մ. Մխիթարյանը, Մ. Օհանջանյանը, Վ. Սվազյանը, Լ. Յարությունյանը և ուրիշներ:

Արցախի վիպական բանահյուսության մեջ զգալի թիվ են կազմում պատմական անձանց ու դեպքերի մասին պատումները, որոնք գրավել են թե՛ բուն Արցախում և թե՛ հարակից շրջաններում, հիմնականում նկատի ունեն դաշտային Ղարաբաղը: Արցախի վիպական բանահյուսության մեջ ամենատարածված պատմավիպական կերպարներն են Շահ Աբասը, Լենկ Թեմուրը, Նադիր Շահը, Մելիք Շահնազարը, Պըլը Պուղին, Դանանդա Բահլուլը, Լոխմանը, Խիկար Իմաստունը, Դալի Թյունին, Ղաչաղ Արզումանը, Աշուղ Յաթանը, Ղալունց Սաքին, Պոլոլուն

---

<sup>1</sup> Յայ ժողովրդական հեքիաթներ, VIII գիրք, Թիֆլիս, 1894, IX գիրք, Թիֆլիս, 1902 և X գիրք, Թիֆլիս, 1903:

Բագը, Սիրգա Դային, Մուլա Նասրեդդինը (արցախցիները ասում են Մասրադդին): Այս կերպարները բանահյուսության մեջ հանդես են գալիս նորովի, պատմական անձի բնավորությունից ու նկարագրից տարբեր, արդեն ժողովրդի կողմից խմբագրված, ավելի սաստկացված ու ընդգծված բնավորության գծերով: Արցախի բանահյուսության մեջ հանդիպող պատմական անձինք պայմանականորեն ստորաբաժանվում են երկու խմբի.

ա) Պատմական դեմքեր, որոնք ժամանակագրորեն ավելի մոտ են մեզ, ու թեև վիպականացված, դեռևս զգալի են նրանց, որպես պատմական անձ ընկալելը: Նմանօրինակ բանահյուսական կերպարներից են Լենկ Թեմուրը, Շահ Աբասը, Նադիր Շահը, Պըլը Պուդին, Մելիք Շահնազարը:

բ) Պատմական դեմքեր, որոնց կերպարները փոխ են առնվել արևելյան բանահյուսական ավանդույթից: Այդպիսի վիպական կերպարների թվին են պատկանում Դամանդա Բահլուլը, Լոխման Չեքիմը, Խիկար Իմաստունը, Մուլա Նասրեդդինը:

Թվարկված կերպարներից Պըլը Պուդին, Մելիք Շահնազարը, Սիրգա Դային, Կամիի Դային, Չամբի Դային, Թյոննին և Մուլա Նասրեդդինը հիմնականում ներկայացված են զվարճախոսության ժանրում: Այս կերպարներից յուրաքանչյուրը մի վառ անհատականություն է՝ շատ սիրված ու տարածված: Ինչպես հավաստում է ժողովրդական իմաստությունը՝ «շիտակ խոսքը հանաքով կասեն»<sup>1</sup>, հետևաբար բացահայտ ու սրտաբուխ ծաղրի ու ծիծաղի միջոցով արցախցին վեր է հանել այն բոլոր դառնություններն ու խոցելի իրողությունները, որոնք ծանր քարի պես կախված են ոտքից, և որոնցից պետք է ազատվել: Արցախյան զվարճախոսությունները հիրավի ժողովրդական բնավոր ստեղծագործության գլուխգործոցներ են: Նրանցից յուրաքանչյուրն առանձնանում է իր առանձնահատուկ գունագեղությամբ, լավատեսությամբ, կենսունակությամբ: Չվարճախոսության հերոսներից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր անհատական բնավորությամբ ու գործելակերպով, որը բնորոշ է տվյալ տարածաշրջանի մտածելակերպին: Բանահավաք Սարգիս Իսրայելյանը զվարճախոսությունների հայտնի հերոս Թյոննուն բնորոշում է այսպես. «Թյոննին՝ միամիտ, անճարակ մարդու սիմվոլն է

<sup>1</sup> Դանալանյան Ա. Տ., Առաժանի, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1960, էջ 8:

Ղարաբաղում, ինչպես օրինակ, ռուսական Իվանուշկան»<sup>1</sup>, իսկ Միրզա դայուն ներկայացնելիս գրում է. «Միրզա Դային շատ սրախոս և զվարճախոս մարդ է եղել, հայտնի չէ, թե որտեղացի է: Մեկն ասում է՝ խաչենցի է, մյուսը թե՛ վարանդեցի է»<sup>2</sup>:

Փաստորեն բանահավաքը հավաստում է, որ Միրզա Դային իրական անձնավորություն է և տիպիկ արցախյան հավաքական զվարճախոսի կերպար: Միրզա Դայու զվարճախոսությունների շարքն իր մեջ ներառում է բազմաբնույթ պատումներ, որոնցում նա ներկայանում է բարի, համբերատար, անհանդուրժող, զգուշավոր, ծաղրաբան, միամիտ, խորամանկ, երբեմն նաև բանբառակ խոսող, և, ինչպես հաղորդում է բանահավաքը. «Նրա մասին կան նաև անվայել բառերով անեկդոտներ»<sup>3</sup>: Իհարկե պետք է ասել, որ հայիոյանքները և անվայել խոսքերը ժողովրդական զվարճախոսությունների համեմունքն են և ավելի են սաստկացնում այն միտքը, այն գաղափարը, որ դրված է տվյալ ստեղծագործության հիմքում:

Արցախյան հայտնի զվարճախոս Պըլը Պուղին իր կենսասիրությամբ, սրամտությամբ, հնարամտությամբ, բառախաղերով գրեթե միշտ հակադրվում է Մելիք Շահնազարին, ծաղրում է նրան և ի հայտ է բերում սոցիալական անհավասարությունը, ինչպես օրինակ այն հանրահայտ զվարճախոսության մեջ՝ երբ մի անգամ Պուղին մի քանի տեղից կարկատված չուխայով գնում է Մելիք Շահնազարի մոտ: Մելիքը ձեռք է առնում Պուղուն. «Տեղ-տեղ շնհավեր ինի չուխան»: Հնարամիտ Պուղին անմիջապես պատասխանում է. «Ուրը մաչ ապրիս, Մելիք»<sup>4</sup>:

Զվարճախոսություններում Մելիք Շահնազարը բացասական կերպար է, նրա բնավորության գծերը խտացված ու ընդգծված են, և նրա հակոտնյա Պըլը Պուղին իր վարքագծով իրավամբ նպաստում է նրա բռնակալ ու հիմար էությունը ցույց տալու համար: Մելիք Շահնազարն արցախցիների կողմից սիրված չէր և, ինչպես բացատրում է Ս.

---

<sup>1</sup> ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ, FFII:8829,02-8829,02, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, I մաս, 1945:

<sup>2</sup> FFVI:5553,01-5553,01, **Իսրայելյան Ս.**, Միրզա Դայու և զանազան անեկդոտներ, ձեռագիր ժողովածու: ՀԱԻԲԱ:

<sup>3</sup> FFVI:5553,02-5553,02, **Իսրայելյան Ս.**, նույն տեղում, ՀԱԻԲԱ:

<sup>4</sup> FFII:9030,02-9030,02, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, II մաս, 1945, ՀԱԻԲԱ:

Իսրայելյանը, «Մելիք Շահնազարը մելիքությունը ստացել էր ոչ օրինական ճանապարհով: Ըստ այն ժամանակվա (XVII դար) օրենքի՝ հոր մահից հետո մելիքությունն անցնում էր մեծ որդուն, իսկ մնացած որդիները ստանում էին բեկի տիտղոս: Մելիք Շահնազարը մելիքության տիտղոսը յուրացնելու համար սպանել է տալիս իր մեծ եղբորը: Ժողովուրդը շատ վրդովված էր և այս բանի համար չէր սիրում Մելիք Շահնազարին»<sup>1</sup>:

Ժողովուրդը գեղարվեստական հնարանքների միջոցով իր բացասական վերաբերմունքն է արտահայտել այն պատմական դեմքի նկատմամբ, որը բացասական բախտորոշ դեր է խաղացել Արցախի ճակատագրում և որին Բաֆֆին անվանել է «Ղարաբաղի կործանիչ»<sup>2</sup>: Պըլը Պուղին ծառայում էր Մելիք Շահնազարի մոտ և փաստորեն նրա պալատական ծաղրածուն էր, սակայն տիրոջ և ծառայի փոխհարաբերություններում վերջին հաշվով առավելությունն ու հաղթությունը միշտ Պուղու կողմն էր:

Չվարճախոսությունների մի մասում առաջին պլանն է մղվում սոցիալական սուր երգիծանքը, ինչպես օրինակ՝ «Պըլը Պուղու ղզղանը», «Պըլը Պուղու օխտը պեռնը ցորենը»<sup>3</sup> պատումներում Մելիք Շահնազարը, օգտվելով իր բարձր դիրքից, խաբում է Պըլը Պուղուն, բայց վերջինս ավելի խորամանկ է գտնվում և մի լավ դաս է տալիս դաժան ու մեծամիտ մելիքին:

Հարկ է նշել, որ Պըլը Պուղու մասին զվարճախոսությունները մեծ մասսայականություն են վայելում թե՛ Արցախում և թե՛ Հայաստանի մյուս շրջաններում:

Ինչպես տեսնում ենք, պատմական դեմքերը բանահյուսության մեջ հանդես են գալիս նոր նկարագրով: Բայց ոչ բոլոր պատմական դեմքերն են, որ հերոսականացվում են: Լենկ Թեմուրը՝ իր սարսափազդու ավերածություններով, կոտորածներով, գերեվարություններով սոսկալի հետք է թողել ժողովրդի պատմական հիշողության վրա: Արցախի բանահյուսությունը պահպանել է բազմաթիվ ավանդություններ՝ կապված Լենկ Թեմուրի արշավանքների հետ: Այդ փաստը հավաստում է

<sup>1</sup> FFII:9041,03-9042,00, **Իսրայելյան Ս.**, ՀԱԻԲԱ:

<sup>2</sup> **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, IX հ., Խամսայի մելիքությունները, «Սովետական գրող», Ե., 1987, էջ 452:

<sup>3</sup> ՀԱԲ, **Ղազիյան Ա.**, Արցախ, հ. 15, ՀՍՄՀ ՊԱ հրատ., Ե., 1983, էջ 140-141:

Ման Լեոն. «Լանկթամուր և Լանկթամուր ամեն տեղ. ուր որ գնում եք, ուր երկու խոսք եք հարցնում մի հին ավերակի մասին, Լանկթամուրի անունն եք լսում: Ո՞վ գիտե, գուցե կաղ հրեշը այս բոլոր տեղերը չի էլ տեսել, ավերել: Բայց նրա արշավանքը այնպիսի սոսկալի հիշատակ է թողել, որ ամեն մի ավերմունք նրան են վերագրում»<sup>1</sup>: Արցախյան տեղանունների ստուգաբանության մասին ավանդություններում հիմնականում պատմվում են Լեոն Թեմուրի ասպատակությունների և նրանց դեմ դուրս եկած ու հերոսաբար կռված ու նահատակված եղբայրների մասին, որոնց նահատակության վայրերում կառուցվել են սրբատեղիներ (օրինակ՝ «Երեք մանկունք» ուխտատեղի մասին»<sup>2</sup>, «Ինն մաս» ուխտատեղի մասին»<sup>3</sup>, «Ճոխտակ խաչ»)<sup>4</sup>:

Մի այլ արցախյան ավանդություն պատմում է, որ «մահաշունչ վիշապ» Թեմուրը, ինչպես նրան անվանում է պատմիչ Թովմա Մեծփեցին, իր գորքերը շարում է Ամարասից մինչև Արաքս և հրամայում Ամարասի վանքի քարերը միմյանց տալով թափել Արաքսը<sup>5</sup>: Բռնակալը ոչնչացնում էր ոչ միայն մարդկանց, այլև՝ նրանց ստեղծած ճարտարապետական հուշարձանները:

Այս ավանդության մեկ այլ տարբերակ հաղորդում է Ղ. Ինճիճյանը, ըստ որի՝ Լեոն Թեմուրը Եփրատի քանդված կամուրջը վերականգնելու համար որոշում է քանդել Տարոնի Աշտիշատ գյուղի Սուրբ Սահակ եկեղեցին, որի համար իր զինվորներին շարում է կողք-կողքի, որպեսզի քարերը ձեռքից ձեռք փոխանցելով տեղ հասցեն<sup>6</sup>:

Այս երկու ավանդությունները գալիս են հաստատելու, որ միմյանցից այդքան հեռու գտնվող Տարոնի և Արցախի բնակիչները նույն բռնություններին են ենթարկվել, և ժողովուրդը միատեսակ է արձագանքել պատմական դեպքերին:

---

<sup>1</sup> Լեո, Երկերի ժողովածու, VIII հ., Իմ հիշատակարանը, «Սովետական գրող», Ե., 1985, էջ 110:

<sup>2</sup> FFV:8107,01-8107,01, **Առաքելյան Մ.**, ԼՂԻՄ բանախոսություն, ձեռագիր ժողովածու, ՀԱԻԲԱ:

<sup>3</sup> FFV:8107,03-8109,00, **Առաքելյան Մ.**, նշվ. աշխ., ՀԱԻԲԱ:

<sup>4</sup> FFV:7753,01-7753,01, **Առաքելյան Մ.**, նշվ. աշխ. ՀԱԻԲԱ:

<sup>5</sup> FAV:8940,02-8940,02, Ազգագրական հանդես, Բ գիրք, էջ 7, **(Բարախանյան Ա. (Լեո) ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 9) ՀԱԻԲԱ, Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, էջ 233:

<sup>6</sup> **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 253:

Լենկ Թեմուրի ժամտ կերպարն է բացահայտում բանահյուսական հետևյալ սյուժեն՝ Լենկ Թեմուրը, առաջին անգամ իր զգվելի կերպարանքը տեսնելով հայելու մեջ, մի ամբողջ օր լաց է լինում: Մյուս օրը նա տեսնում է, որ իր վեզիրն էլ է լաց լինում, և այդ լացը շարունակվում է մի ամբողջ շաբաթ, երբ Լենկ Թեմուրը հարցնում է նրա լացի պատճառը, վեզիրն ասում է. «Դու մի անգամ ես քո երեսը հայելու մեջ տեսել, լաց ես լինում, բա ես ի՞նչ անեմ, որ ամեն օր եմ երեսդ տեսնում»<sup>1</sup>:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրված նյութը, Լենկ Թեմուրի անձը ներկայացնող ավանդությունները բոլորը տեղական ծագում ունեն և կապված են որոշակի տեղավայրերի ու պատմական դեպքերի հետ, իսկ այն ստեղծող ժողովուրդը բանահյուսական բոլոր միջոցները օգտագործել է՝ ընդգծելու բռնակալի դաժան կերպարը:

Արցախի պատմական ավանդությունների մեջ մեծ թիվ են կազմում Խամսայի մելիքությունների ժամանակաշրջանի (17-18-րդ դդ.) քաղաքական անցքերը, պատերազմները, ասպատակությունները, ազատագրական շարժումները, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև գործիչների, մելիքների, հոգևորականների, հասարակ ժողովրդի հերոսական վարքը:

Արցախի բանահյուսության պատմավիպական կերպարներից մեկն էլ Շահ Աբասն է, որի մասին պատումները մեծ տարածում ու ժողովրդականություն են վայելել: Իրանի և հարևան երկրների պատմության մեջ նշանակալից հետք թողած Շահ Աբասը իր գործունեության շնորհիվ դեռևս իր կենդանության օրոք դարձել է ժողովրդական գրույցների ու հեքիաթների վիպական գծերով օժտված հերոս և իդեալականացվել ժողովրդի կողմից: Շահ Աբասի՝ վիպական անձ լինելու հանգամանքի մասին վկայում են բազմաթիվ ուսումնասիրողներ և բանահավաքներ: Բանահավաք Աղամալ Քալանթարյանը հաղորդում է, որ Իրանում Շահ Աբասի մասին գրույցները տարածված են թե հայերի և թե պարսիկների միջավայրում, իսկ իրանագետ Է. Շվարցը վկայում է, որ «պարսկական հեքիաթ-լեգենդները սովորաբար պատմում են միանգամայն իրական անձանց, օրինակ՝ Շահ Աբասի, Աբու Ալի իբն Սինայի և

---

<sup>1</sup> FFX:4509,02-4510,00, Մ. Գրիգորյան-Սպանդարյան Մ., Արցախի բանահյուսություն, մեքենագիր ժողովածու, ԶԱԻՔԱ:



ուրիշների մասին»<sup>1</sup>: Պատմական Շահ Աբասը հաջողությամբ յուրացրել է ավանդական բանահյուսության հեքիաթային հերոսների ֆունկցիաները և դարձել է վիպական կերպար, որոշ դեպքերում բանահյուսական ստեղծագործությունների հորինվածքում պահպանելով պատմական իրողության տարրեր, ինչպես օրինակ, նրա աշխարհատեսությունը, ծպտված շրջագայելու սովորությունը: Վերջինս բանահյուսական սյուժեներում դարձել է Շահ Աբասի կերպարին ուղեկցող պարտադիր տարրերից մեկը: Պատմագրությունը Շահ Աբասի աշխարհատեսությունը դիտել է որպես նրա քաղաքական գործունեությանը նպաստող և հպատակների տրամադրությունները շոշափող միջոց. «Եւ որպես յառաջդ ասացուք, այլակերպ էր զինքն շահը, և շրջեր ի փողոցս և ի պողոտայս ի լսել թե զինչ ասեն»<sup>2</sup>, նույն նպատակը առկա է ժողովրդական հեքիաթներում. «Շահաբասը սովորություն օներ դերվիշու շորեր ար հագնում, տյուս կյամ քաղաքը ման կյամ, վըեր տըսնա՝ ժողովուրթը ուրան անա գոհ ը՞ն, անգոհ ը՞ն, հո՞ւվ ա իրանից կյենգատ անում, հո՞ւվ ա թարիփ անում»<sup>3</sup>:

Թեև կարող ենք ասել, որ ծպտված շրջագայելու սովորությամբ ընդհանուր վիպական մոտիվներում ու համանման ավանդական սյուժեներում բանահյուսական ավանդույթի համաձայն կարող է այլևայլ ժամանակներում ու տեղում վերագրվել ուրիշ պատմական դեմքերի (ինչպես օրինակ, Չարուն ալ Ռաշիդին) կամ ընդհանրապես որևէ շահի, թագավորի, փառիշահի, սուլթանի և այլն: Սակայն հիմնականում, եթե հեքիաթում խոսք է գնում ծպտված դերվիշի կամ չարչու մասին, ապա ենթատեքստում ըմբռնվում է Շահ Աբասը: Այդպիսի շահաբասյան սյուժեներում առկա են թե պատմական հիմք ունեցող մոտիվները և թե ընդհանուր վիպական բնույթ ունեցողները, օրինակ.

ա) Շահը ունկնդրում և հաշվի է նստում ծերունու, խելացի աղջկա կամ կնոջ, երիտասարդ տղայի իմաստուն խոսքին («Չինչ փռնիս-անիս, վերջը մտածե ետնան ըրա»<sup>4</sup>, «Շահաբասը նեղն

<sup>1</sup> Шварц Э., К истории изучения фольклора Ирана, Душанбе, 1974, с. 47.

<sup>2</sup> Առաքել Դավիթեցի, Պատմութիւն, Էջմիածին, 1896, էջ 199:

<sup>3</sup> FFXII:3159-3171, Դագիյան Բ., ԼԴԻՄ բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1974, ԳԱԻԲԱ:

<sup>4</sup> Օհանջանյան Մ., Լեռնային Ղարաբաղի զվարճախոսություններ, ձեռագիր ժողովածու, № 1012, 1981, ԳԱԻԲԱ:

ա ընգալ»<sup>1</sup>, «Իմաստուն կնեգյը»<sup>2</sup>:

- բ) Շահն իրագործում է միայն իրեն հատուկ անգութ հարկահանություն («Աբաս թագավորի պարտք առնելը»)<sup>3</sup>:
- գ) ժողովրդի ցածր խավերից պետական պաշտոնյա ընտրումը («Շահ Աբասն ու Պըլը Պուղին»)<sup>4</sup>:
- դ) Մի կնոջ անհավատարմության պատճառով շահը կարգադրում է ողջ կանացի ցեղը ոչնչացնել («Շահաբասը հրամայում ա ռւրան երկրի օլլուշաղը կուտորին»<sup>5</sup>, «Ամեն կնիկ մի չիմիլ»)<sup>6</sup>:
- ե) Վիպական հերոսը (Շահ Աբաս) ակամա վկա է դառնում նորածնի ճակատագրի որոշմանը և փորձում է դեմ կանգնել ճակատագրին («Ճկատեն կյիրածը ճինջվիլ չի») <sup>7</sup>:
- զ) Շահ Աբասը կապվում է ցածր խավի աղջկա (գյուղացու) հետ և, ապագա որդու համար մի նշան թողնելով (ապարանջան, մեղալ), հեռանում է:

Այս մոտիվներից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրման տարողունակ թեմա է:

Շահաբասյան սյուժեների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շահ Աբասի վիպական կերպարը իր բնույթով հակասական ու երկակի է: Հրաշապատում հեքիաթներում Շահ Աբասը ստացել է ընդհանուր վիպական գծեր և որպես պատմական դեմք չի ընկալվում, մինչդեռ ավանդություններում և պատմավիպական զրույցներում Շահ Աբասի սյուժետային գիծը հարազատ է մնացել պատմական իրադարձություններին:

Արևելյան բանահյուսական ավանդույթից Արցախի բանահյուսու-

---

<sup>1</sup> **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, № 5 տետր էջ, 38-40, ՀԱԻԲԱ:

<sup>2</sup> FFV:8291,01-8230,00, **Առաքելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ՀԱԻԲԱ:

<sup>3</sup> ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Շահունյանի շրջկենտրոնի և Հայ Պարիս գյուղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1975, № 2 տ., էջ 13:

<sup>4</sup> ՀԱԻԲԱ, **Կարապետյան Ա.**, Գանձակի ժող. բանահյուսություն, 1974:

<sup>5</sup> ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, № 5 տ., 1973, էջ 9:

<sup>6</sup> FFIII:1535,01-1540,00, **Իսրայելյան Ս.**, ձեռագիր ժողովածու, 1945, ՀԱԻԲԱ:

<sup>7</sup> ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1983,

թյանն են անցել մի շարք սյուժեներ Լոխման Յեքիմի մասին: Լոխման Յեքիմն արաբական միջավայրի ծնունդ է և հայերին անցել է արաբների հետ դարավոր շփումների ընթացքում<sup>1</sup>: Լոխման Յեքիմը հնագույն իմաստուն հերոս է, որը, ըստ ավանդության, ապրել է հազար տարի: Նրա մասին պատումների շարքը մինչիսլամական արաբական բանահյուսական ավանդույթն է<sup>2</sup>: Ըստ արաբական հնագույն աղբյուրների՝ արաբների մոտ լայն տարածում են ունեցել առած-ասացվածքները, աֆորիզմներն ու առակները, որոնց հեղինակը համարվում է առասպելական իմաստուն Լոխմանը<sup>3</sup>: Լոխմանը, որպես իմաստուն և խրատաբան, իր անհավատ որդի Տարանիմ<sup>4</sup> ուղղված իր ասույթներով ու խորհուրդներով մտել է մուսուլմանների սուրբ գիրքը<sup>5</sup>: Արաբ հեղինակների մոտ Լոխմանի մասին պահպանվել են մի շարք ավանդություններ, որոնք հավաստում են, որ նա իրական-պատմական դեմք է: Ըստ իբն Կասիրի՝ Լոխմանը եթովպացի ստրուկ է եղել, որին ազատություն և հարստություն է տվել Բանի Իսրայիլի մարդկանցից մեկը, որովհետև նա մեծ իմաստությամբ օժտված սուրբ մարդ է եղել<sup>6</sup>: Յենց «հաքիմ» բառն էլ արաբերեն նշանակում է խելացի, կրթված, խորհող, գիտուն, իմաստուն, իսկ «լոխման» բառը նշանակում է հոգատար, հսկող, սնուցող<sup>7</sup>: Յայերենում «լոխման» կամ «լողման» բառը բացատրվում է որպես առասպելական բժիշկ կամ չափազանց հմուտ բժիշկ<sup>8</sup>, իսկ հեքիմ բառը բացատրվում է որպես սնոտիապաշտական միջոցներով բուժող մարդ<sup>9</sup> կամ բժշկական կրթություն չստացած, տնային միջոցներ-

<sup>1</sup> Պանալանյան Ա., Ավանդապատում, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1969, էջ 68:

<sup>2</sup> Мифы народов мира, II том, М. 1988, с. 77.

<sup>3</sup> История всемирной литературы, т. 2, М., Наука, 1984, с. 215 (Фильштинский И. М., Арабская литература).

<sup>4</sup> Юсуф Хаттар Мухаммад, Мудрости Лукмана Хакима, Уруссу Татарстан, Иман, 2002, с. 4.

<sup>5</sup> Коран, т. 2, М. 1990, гл. 27 (Муравьи), с. 701.

<sup>6</sup> Юсуф Хаттар Мухаммад, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Толковый словарь татарских личных имен (на рус. языке), Казань, 1998, <http://www.tatar.kz/isenn-ra.htm>.

<sup>8</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1972, էջ 424, Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Ե., «Հայաստան», 1976, էջ 534:

<sup>9</sup> Աղայան Էդ., նշվ. աշխ. էջ 868:

րով բուժող անձ<sup>1</sup>: Այս պարագայում մենք գործ ունենք արաբական միջավայրից փոխառված հատուկ անվան իմաստափոխության և որպես հասարակ անուն հանդես գալու հանգամանքի հետ: Լոխման Յեքիմ անհատի գործառույթը հենց բժշկությունն էր, ուստի հայկական և արցախյան բանահյուսական ավանդություն մա հանդես է գալիս որպես թռչունների ու բույսերի լեզուն հասկացող հռչակավոր բժշկապետ: Արցախի լոխմանյան իրապատում հեքիաթներում Լոխման Յեքիմը հիմնականում զբաղվում է բժշկությամբ և «հիշտեղ տիժեր հիվանդ կա»<sup>2</sup>, առողջացնում է: Լոխմանը նաև իմաստուն է և կարողանում է գուշակություններ անել<sup>3</sup>, սակայն բարոյախոսական զրույցը եզրահանգում է, որ Լոխմանն էլ կարող է սխալվել և իմաստունից իմաստունն էլ կա: Ինչպես Շահաբասյան սյուժեները, լոխմանյան սյուժեները նույնպես հատուկ քննության առարկա են:

Արցախյան բանահյուսության պրպտումները ցույց տվեցին, որ այն պատմական անձինք, ովքեր այս կամ այն կերպ կապված են եղել Արցախի պատմության հետ և խոր հետք են թողել, իրենց կատարած լավ ու վատ գործերով, արժանացել են ժողովրդի ուշադրությանը, մուտք են գործել բանահյուսական միջավայր, ենթարկվել են կերպարանափոխության և դարձել վիպական կերպարներ: Արցախի վիպական բանահյուսությունը իր սյուժեներով, թեմատիկայով, ընդհանուր նկարագրով հար և մման է համահայկական բանահյուսությանը և կազմում է նրա մի մասը: Այն կարիք ունի խոր ուսումնասիրման ու ընդհանրացումների:

---

<sup>1</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Ե., 1972, էջ 348:

<sup>2</sup> FFVI:5240,01-5251,00, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի հեքիաթներ, 1968:

<sup>3</sup> FFV:839,01-8344,00, **Առաքելյան Մ.**, ԼՂԻՄ բանահյուսություն, 1962, ձեռագիր ժողովածու, ՀԱԻԲԱ: